Հավելված
ՀՀ վարչապետի 2009 թ.
նոյեմբերի 13 -ի N 936 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՓՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՑԱՆՑ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Ծրագրի բովանդակությունը	Ծրագիրն իրականացնելու ժամկետը	Ծրագիրն իրականացնելու համար պատասխանատու պետական մարմնի անվանումը	Ծրագիրն իրականացնելու համար ֆինանսական ապահովման աղբյուրը
1	2	3	4	5
1.	Վարչական իրավախախտումների և տրանսպորտային միջոցների հաշվառման ու վարորդական վկայականներ տալու ավտոմատացված տեղեկատվական-փնտրողական համակարգի շահագործում	2010 թ. առաջին եռամսյակ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային ֆոնդ
2.	Ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային հաշիվներին դրամական միջոցներ փոխանցելու համար ներկայացվող վճարման հանձնարարականների (կարգադրությունների) պարտադիր լրացման ենթակա դաշտերի սահմանում	2010 թ. առաջին եռամսյակ	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ	-

09_936

1	2	3	4	5
			ոստիկանություն ՀՀ ֆինանսների նախարարություն	
3.	Ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային հաշիվներին տարբեր բանկերից, այդ թվում՝ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով, փոխանցված (մուտքագրված) գումարների վերաբերյալ գանձապետարանից ստացվող տեղեկատվության կառուցվածքային միատարության (միանմանության) ապահովում	2010 թ. առաջին եռամսյակ	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	-
4.	Ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային հաշիվներին տարբեր բանկերից, այդ թվում՝ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով, փոխանցված (մուտքագրված) գումարների վերաբերյալ գանձապետարանից ստացվող տեղեկատվության փոխանցման էլեկտրոնային կապի միջոցի ստեղծում	2010 թ. առաջին եռամսյակ	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	ՀՀ պետական բյուջե ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային ֆոնդ
5.	Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ճանապարհային ոստիկանության գործունեությանն առնչվող տեղեկատվության փոխանցման էլեկտրոնային կապի միջոցի ստեղծում	2010 թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային ֆոնդ
6.	Ճանապարհային ոստիկանության՝ վարչական իրավախախտումների և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող բոլոր ստորաբաժանումների ապահովում՝ համապատասխան տեխնիկական միջոցներով	2010 թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային ֆոնդ
7.	Ճանապարհային ոստիկանության բոլոր ստորաբաժանումների միջև տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման գերատեսչական ցանցի շահագործում	2010 թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային ֆոնդ

1	2	3	4	5
8.	ՀՀ կենտրոնական բանկի ավտոապահովագրության ռեգիստրի և ճանապարհային ոստիկանության նոր տեղեկատվական-փնտրողա-կան համակարգի միջև առանձնացված էլեկտրոնային կապուղու ստեղծում	2010 թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	-
9.	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի վարչական իրավախախտումների հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել	վարչական իրավախախ-տումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

09_936